

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լուծումներ և հեռանկարներ

ԲԵՌԼԻՆ 2018

Բովանդակություն

I.	Ճգնաժամի նախապատմությունը	3
II.	Փոքրամասնության կառավարությունը	4
1.	Փոքրամասնության կառավարության հասկացությունը և դերը պետական պրակտիկայում.....	4
2.	Փոքրամասնության կառավարության առաջացումը	5
3.	Օրենսդրական գործընթացը փոքրամասնության կառավարության դեպքում.....	6
4.	Փոքրամասնության կառավարության դադարումը.....	6
III.	Խորհրդարանում կառավարությանն աջակցող մեծամասնության բացակայությամբ պայմանավորված ճգնաժամը հաղթահարելու գործիքները	7
1.	Կառուցողական անխտոստության քվեին՝ ըստ ՀՀ Սահմ. 115-րդ հոդվածի	8
2.	Կառավարության վստահության հարցը՝ ըստ ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի.....	8
ա)	Պոզիտիվ և նեգատիվ վստահության հարց	10
բ)	ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի կիրառման ոլորտը	11
3.	Վարչապետի հրաժարականը	13
ա)	«Քաղաքական անկայունության վիճակը» իբրև վարչապետի «ոչ իսկական» հրաժարականի չգրված հատկանիշ.....	13
բ)	Քաղաքական անկայունության վիճակը	16
IV.	Խորհրդարանի ինքնալուծարման իրավունքը՝ իբրև ճգնաժամի լուծման գործիք	16
V.	Հեռանկարներ	18

I. Ճգնաժամի համառոտ նախապատմությունը

2018 թ. մարտի 31-ին Նիկոլ Փաշինյանն սկսեց բողոքի քայլերը ընդդեմ Սերժ Սարգսյանի հետագա իշխանավարման, որը մեկնարկեց Գյումրի քաղաքից և ապրիլի 13-ին հասավ մայրաքաղաք Երևանի Ազատության հրապարակ: 2018 թ. ապրիլի 17-ին երկրում փաստացի սկսված հեղափոխական շարժման պայմաններում Սերժ Սարգսյանի ղեկավարած քաղաքական ուժի՝ ՀՀԿ-ի վերահսկողության ներքո գտնվող Ազգային ժողովը Սերժ Սարգսյանին ընտրեց վարչապետի պաշտոնում: Դրանից հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարեց Հայաստանում «**Թավշյա հեղափոխության**» մեկնարկի մասին: Տեղի ունեցան ցույցեր, երթեր, քաղաքացիական անհնազանդության զանգվածային շարժումներ, որոնց արդյունքում ապրիլի 23-ին վարչապետ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց: Կառավարությունը հանրապետության նախագահին ներկայացրեց իր հրաժարականը՝ համաձայն ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածի: Դրանից հետո Ազգային ժողովը պետք է ՀՀ Սահմ. 149-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան ընտրեր վարչապետ:

Ազգային ժողովը մայիսի 8-ին վարչապետ ընտրեց Նիկոլ Փաշինյանին, որն էլ ձևավորեց փոքրամասնության կառավարություն: Այս նոր ձևավորված կառավարությունը գործեց մինչև հոկտեմբերի 16-ը, երբ վարչապետը հրաժարական տվեց **մեկ նպատակով՝ դրանով ճանապարհի հարթել նոր խորհրդարանական ընտրությունների համար:** ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածի հիման վրա կառավարությունը կրկին հանրապետության նախագահին ներկայացրեց իր հրաժարականը: Ազգային ժողովը նորից ստիպված էր զբաղվել նոր վարչապետ ընտրելու հարցով: Հրաժարական ներկայացրած վարչապետն Ազգային ժողովին, որն իրեն մի անգամ արդեն ընտրել էր վարչապետի պաշտոնում, կրկին առաջադրեց իր թեկնածությունը: Ազգային ժողովը երկու անգամ չընտրեց վարչապետ և իրավունքի ուժով արձակվեց ՀՀ Սահմ. 149-րդ հոդ. 3-րդ մասի 2-րդ նախադասության հիման վրա:

Թե ինչ է փոքրամասնության կառավարությունը, ինչպես է այն ստեղծվում ու գործում, ինչ մեխանիզմներ ու գործիքներ կան Սահմանադրությունում նման իրավիճակների ու ճգնաժամերի հաղթահարման համար, թույլատրելի է արդյոք վարչապետի հրաժարականը նոր խորհրդարանական ընտրությունների հասնելու նպատակով, Սահմանադրությունը խորհրդարանի արձակման ինչ հիմքեր է նախատեսում ու նման այլ հարցերի պարզաբանմանն ու քննարկմանն է նվիրված մեր այսօրվա միջոցառումը:

II. Փոքրամասնության կառավարությունը

1. Փոքրամասնության կառավարության հասկացությունը և դերը պետական պրակտիկայում

Փոքրամասնության կառավարություն է համարվում այն կառավարությունը, որին աջակցող քաղաքական ուժը կամ քաղաքական ուժերի կոալիցիան խորհրդարանում մեծամասնություն չունեն:

Հայաստանի Հանրապետությունը փոքրամասնության կառավարության փորձ չունի: Անգամ եթե եղել են դեպքեր, երբ մի կուսակցություն խորհրդարանում բավարար մեծամասնություն չի ունեցել միայնակ կառավարություն կազմելու համար, միշտ հաջողվել է կոալիցիա կազմել այլ կուսակցությունների հետ ու այդպիսով ապահովել կառավարությանն աջակցող մեծամասնություն խորհրդարանում:

Կոալիցիայի այլընտրանք է **փոքրամասնության կառավարությունը**, որը, սակայն, չի ապահովում այնքան քաղաքական կայունություն, որքան կոալիցիոն կառավարությունը: Սովորաբար փոքրամասնության կառավարությունը հանգեցնում է քաղաքական անկայունության և ոչ արդյունավետ դեկլարման, ինչի օրինակ է Վայմարյան Հանրապետության ժամանակների Գերմանիան (1919-1933): Վայմարյան Հանրապետությունում երկար ժամանակ կառավարում էին քաղաքացիական փոքրամասնության կառավարությունները, որոնք, սակայն, ունեին կարճ կյանք և աչքի էին ընկնում «քրոնիկ անկայունությամբ»: Ըստ Վայմարյան Հանրապետության սահմանադրության՝ Ռայխսկանցլերի նշանակումը պայմանավորված չէր խորհրդարանի առաջարկության կամ խորհրդարանում ընտրության հետ, և կառավարությունը կարող էր շարունակել պաշտոնավարել նաև Ռայխսթագի արձակումից հետո կամ նրա կամքին հակառակ:

Դրան հակառակ՝ փոքրամասնության կառավարությունների դրական փորձ կա սկանդինավյան երկրներում: Օրինակ՝ Դանիայում 1953 թ. սահմանադրական բարեփոխումներից ի վեր միայն երեք կառավարություններ են ունեցել մեծամասնություն խորհրդարանում, մնացած բոլորը եղել են փոքրամասնության կառավարություններ:

Պետք է ընդգծել, որ փոքրամասնության կառավարությունն ավելի վատ որակի կամ ավելի ցածր կարգի կառավարություն չէ: ՀՀ Սահմանադրությունը տարբերություն չի դնում մեծամասնության ու փոքրամասնության կառավարության միջև: Տարբերությունն ավելի շատ քաղաքական բնույթի է, թեև փոքրամասնության կառավարության՝ հաջողության հասնելու շանսերը բնականաբար ավելի քիչ են:

Հայաստանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների լույսի ներքո հայկական սահմանադրական իրավունքում առաջին անգամ լրջորեն ծագում է այն հարցը, թե սահմա-

նադրաիրավական ինչ նախապայմանների դեպքում կարող է ստեղծվել ու աշխատել փոքրամասնության կառավարությունը:

2. Փոքրամասնության կառավարության առաջացումը

ՀՀ Սահմանադրությունում գոյություն չունի որևէ բառացի կարգավորում փոքրամասնության կառավարության ձևավորման մասին: Սահմանադրաիրավական տեսանկյունից փոքրամասնության կառավարությունը ՀՀ-ում կարող է ձևավորվել ամենատարբեր պատճառներով:

1. փոքրամասնության կառավարությունը կարող է, նախ, ի հայտ գալ **խորհրդարանի գործունեության ընթացքում**, երբ կառավարությունը կորցնում է խորհրդարանում իրեն աջակցող մեծամասնությունը, օրինակ, երբ կոալիցիայի կազմից դուրս է գալիս կառավարությանն աջակցող մի խմբակցություն, և խորհրդարանական նոր մեծամասնությունը չի ընտրում նոր վարչապետ:
2. Փոքրամասնության կառավարությունը կարող է նաև ձևավորվել **հենց սկզբից՝** խորհրդարանի ընտրությունից հետո: Պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն ստացած վարչապետի թեկնածուն ևս, կախված կոնկրետ պահի քաղաքական իրադրությունից, կարող է ի սկզբանե լինել փոքրամասնության վարչապետ: Դա հնարավոր է այն դեպքում, երբ թեև վարչապետի թեկնածուի օգտին քվեարկում են նաև խորհրդարանական այլ խմբակցություններ, բայց որոնք կա՛մ մերժում են կոալիցիա կազմելու առաջարկը, կա՛մ ի սկզբանե չկա կոալիցիայի մաս կազմելու հնարավորություն, և չեն տալիս նաև կառավարությանն անպայման աջակցելու խոստում: Վարչապետին ընտրած խորհրդարանական այդ մեծամասնությունը, փաստորեն, իրականում կառավարությանն աջակցող քաղաքական ուժի կամ այդպիսի ուժերի կոալիցիայի արտահայտությունը չէ, և վարչապետն իրականում չի վայելում խորհրդարանական մեծամասնության վստահությունը: Թե ինչու են այլ խմբակցություններն այդ դեպքում քվեարկում իրենց վստահությունը չվայելող թեկնածուի օգտին, կարող է իր հերթին տարբեր պատճառներ ունենալ: Դրանցից մեկը խորհրդարանի վաղաժամ արձակումը չթույլատրելն է: Այլ կերպ ասած՝ խորհրդարանի արձակման վտանգը ճնշում է գործադրում պատգամավորների վրա վարչապետի թեկնածուին տալ անհրաժեշտ մեծամասնությամբ ձայներ, բայց ոչ անհրաժեշտաբար նաև խորհրդարանական աջակցություն:

Հայաստանի փորձը ցույց տվեց, որ վերջին եղանակով փոքրամասնության կառավարություն կարող է ձևավորվել անգամ **խորհրդարանի լիազորությունների ժամկետի ընթացքում**: Հենց այդպիսին էր վարչապետ Փաշինյանի կառավարությունը՝ իբրև փոքրամասնության կառավարության առաջին դեպք Հայաստանում:

3. Օրենսդրական գործընթացը փոքրամասնության կառավարության դեպքում

Կառավարության ամենախսկական խնդիրը՝ **պետության ընդհանուր ղեկավարումը** (ՀՀ Սահմ. 146-րդ հոդ. 3-րդ մաս), թեև անհնար չի դառնում փոքրամասնության կառավարության սահմանափակ գործունակության պատճառով, բայց դժվարանում է: Մեր ժողովրդավարության բնորոշ հատկանիշը մեծամասնության որոշումներն են: Այս **մեծամասնության սկզբունքը** հատկապես բնորոշ է Ազգային ժողովի աշխատանքին (ՀՀ Սահմ. 103-րդ հոդ. 1-ին մաս):

Օրենքների ընդունման հարցում փոքրամասնության կառավարության հնարավորություններն առաջին հերթին կախված են ընդդիմության խմբակցությունների՝ կառավարության հետ քաղաքական համագործակցության պատրաստակամությունից: Կառավարության գործունեությունն ապահովելու և օրենսդրական նախաձեռնությունների չտապալման համար կառավարությունն ստիպված է քվեարկությունների ժամանակ հենվել կառավարության մաս չկազմող ընդդիմադիր քաղաքական ուժերի աջակցության վրա՝ քաղաքական անհրաժեշտ պայմանավորվածություններ ձեռք բերելու միջոցով: Կառավարությանն աջակցելը կարող է տեղի ունենալ մեծ մասամբ այսպես կոչված **«թաքնված մեծամասնության կառավարության»**, այսինքն՝ խորհրդարանական ընդդիմության կողմից կառավարության գործունեությունը հանդուրժելու միջոցով: Հենց այդպիսի աջակցություն էր ստանում Փաշինյանի փոքրամասնության կառավարությունը խորհրդարանում մեծամասնություն կազմող հանրապետական ընդդիմության կողմից:

Սակայն անգամ փոխզիջումների գնով փոքրամասնության կառավարությունն իր ոչ բոլոր օրենսդրական նախաձեռնությունների համար կարող է ձեռք բերել Ազգային ժողովի մեծամասնության աջակցությունը: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ձախողված նախագիծն ասվածի վառ օրինակ է:

4. Փոքրամասնության կառավարության դադարումը

Անկախ օրենսդրական գործընթացում իր հաջողությունից՝ փոքրամասնության կառավարությունը կարող է գործել մինչև Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը: ՀՀ Սահմ. 115-րդ և 157-րդ հոդվածները ելք են առաջարկում՝ վերականգնելու Ազգային ժողովում կայուն մեծամասնական հարաբերությունները: Փոքրամասնության վարչապետի լիազորությունները դադարեցվում են նույն կանոններով, ինչպես որ մեծամասնության վարչապետինը: Այդ պատճառով փոքրամասնության վարչապետը պաշտպանված չէ 115-րդ հոդվածի **կառուցողական անվստահության քվեից**, որի հիման վրա խորհրդարանական ընդդիմությունը կարող է անվստահություն հայտնել վարչապետին: Սակայն կառուցողական ան-

վստահության քվեն հաջողություն կունենա միայն այն դեպքում, երբ Ազգային ժողովի մեծամասնությունը կրնարի նոր վարչապետ (ՀՀ Սահմ. 115-րդ հոդ. 2-րդ մաս):

Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ընթացքում ևս կարող է ձևավորվել նոր կոալիցիա, որն արտացոլում է խորհրդարանի մեծամասնությունը: Եթե այդ դեպքում չի փոխվում վարչապետը, որն սկզբում ընտրվել է իբրև փոքրամասնության վարչապետ, ապա Ազգային ժողովում վարչապետի ընտրություն անցկացնելու կարիք չկա: Այդպիսի դեպքերում վարչապետը ՀՀ Սահմ. 150-րդ հոդ. 2-րդ նախադասության համաձայն ընդամենը համարապետության նախագահին առաջարկում է ազատել հին նախարարներին և նշանակել նորերին, այնպես որ նոր կառավարության կազմն արտացոլի նոր ձևավորված կոալիցիան: Այդպիսով փոքրամասնության կառավարությունը կոալիցիոն հուշագրի ու կառավարության կազմի փոփոխության միջոցով վերափոխվում է մեծամասնության կառավարության:

Եթե չի հաջողվում ձևավորել նոր կոալիցիա, և կառավարության օրինագծերը չեն ընդունվում Ազգային ժողովի կողմից, ապա հենց փոքրամասնության կառավարությունն ինքն ավելի շատ, քան խորհրդարանական ընդդիմությունը, շահագրգռված է լինում վերջ դնել իր գոյությանը: Որովհետև կառավարությունը, որը չի կարող իրականացնել իր սեփական քաղաքական ծրագիրը և ստիպված է կյանքի կոչել խորհրդարանական ընդդիմության ընդունած օրենքները, ինքն ավելի մեծ վնաս է կրում դրանից և նվազեցնում հաջորդ խորհրդարանական ընտրություններում իր շանսերը: Փոքրամասնության կառավարությունն ստիպված չէ «գերության մեջ մնալ» մինչև Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը, այլ կարող է քաղաքական ճգնաժամի հաղթահարման համար օգտվել Սահմանադրության նախատեսած գործիքներից:

III. Խորհրդարանում կառավարությանն աջակցող մեծամասնության բացակայությամբ պայմանավորված ճգնաժամը հաղթահարելու գործիքները

Խորհրդարանում կառավարությանն աջակցող մեծամասնության բացակայությամբ պայմանավորված ճգնաժամը հաղթահարելու համար Սահմանադրությունը նախատեսում է որոշակի գործիքներ:

Դրանցից մեկը ՀՀ Սահմ. **157-րդ հոդվածի** դրույթն է: Դրա օգնությամբ վարչապետը կարող է փորձել հաղթահարել այն քաղաքական դրությունը, որում տեսանելի է կառավարությանն աջակցող խորհրդարանական մեծամասնության քայքայումը, կամ նման քայքայում արդեն տեղի ունեցել է, կամ վարչապետն այլևս չի կարող վստահ լինել, որ կունենա խորհրդարանի աջակցությունը:

Նույն իրադրության հաղթահարմանն է ուղղված ՀՀ Սահմ. **115-րդ հոդվածի** դրույթը: Երկու դրույթները, սակայն, տարբերվում են նրանով, թե ում կողմից ու ինչ նպատակով են դրանք կիրառվում:

Եվ, վերջապես, քաղաքական ճգնաժամի հաղթահարման միջոց կարող է լինել նաև **վարչապետի հրաժարականը** (ՀՀ Սահմ. 158-րդ հոդ.): Թե արդյոք վարչապետը կշարունակի կառավարել փոքրամասնության կառավարությամբ կամ քաղաքական ճգնաժամի հաղթահարման համար կրնտրի կառավարության վստահության հարցը դնելու ճանապարհը, թե հրաժարական կտա, որոշում է ինքը՝ արդարացի հայեցողությամբ:

1. Կառուցողական անվստահության քվեն՝ ըստ ՀՀ Սահմ. 115-րդ հոդվածի

Կառուցողական անվստահության քվեն՝ ըստ ՀՀ Սահմ. 115-րդ հոդվածի, քաղաքական ճգնաժամը հաղթահարելու գործիք է **Ազգային ժողովի ձեռքում**: Այդ դրույթը Ազգային ժողովին հնարավորություն է տալիս հետևություններ անել խորհրդարանում կառավարությանն աջակցող մեծամասնության կորստից և մեկ այլ վարչապետ ընտրելու միջոցով ցուցադրել կառավարությանն աջակցելու ունակ նոր մեծամասնության առկայությունը: Սակայն ՀՀ Սահմ. 115-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին նախադասությունը խորհրդարանի այս իրավունքը **սահմանափակում է** վարչապետի նշանակումից հետո առաջին մեկ տարվա ընթացքում: Զանի որ ճգնաժամի լուծման այս գործիքն ակնհայտորեն կիրառվել չէր կարող Հայաստանում ստեղծված քաղաքական ճգնաժամի հաղթահարման համար, ուստի այն այստեղ մանրամասնորեն չի քննարկվի:

2. Կառավարության վստահության հարցը՝ ըստ ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի

ՀՀ Սահմ. 115-րդ հոդվածի հետ միասին 157-րդ հոդվածը արտահայտում է խորհրդարանական **կառավարման համակարգի էությունը**, այն է՝ **խորհրդարանի վստահությունից կառավարության կախվածությունը**: Այնուամենայնիվ գործող կառավարության տապալումը հնարավոր է միայն կառուցողական անվստահության քվեի, այսինքն՝ նոր վարչապետ ընտրելու միջոցով: ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածը լրացնում է այս կարգավորումն այն դեպքի համար, երբ **խորհրդարանում չկա նոր կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ մեծամասնություն**:

Կառավարության կողմից իր **վստահության հարցը** դնելու վերաբերյալ սահմանադրական դրույթը (ՀՀ Սահմ. 157-րդ հոդ.) ճգնաժամի հաղթահարման գործիք է **վարչապետի ձեռքում**: Այն ունի **երկու գործառույթ**: Իր վստահության հարցը դնելով՝ կառավարությունը, նախ, խնդրում է խորհրդարանի աջակցությունը: Խորհրդարանում անկայուն մեծամասնական հարաբերությունների դեպքում վարչապետը կարող է օգտագործել այդ գործիքը **կանխարգելիչ նպատակով**: Խորհրդարանի արձակման սպառնալիքն այս դեպքում ունի սթափեցնող ազդեցություն: Մա վստահության հարցի առաջին գործառույթն է՝ իբրև **քաղաքական սթափության կոչ**:

Վստահության հարցի երկրորդ գործառույթը **խորհրդարանական նոր ընտրությունների համար ճանապարհ հարթելն է**: Եթե կառավարությունն արդեն կորցրել է խորհրդարանական մեծամասնությունը, ապա 157-րդ հոդվածի գործիքը հնարավորություն է տալիս, լրացուցիչ նախապայմանների պահպանման դեպքում, ճանապարհ բացել նոր խորհրդարանական ընտրությունների համար: Կառավարության վստահության հարցը դնելու միջոցով վարչապետը կարող է, մյուս կողմից, կանխել կառուցողական անվստահության քվեն կամ վերացնել ապակառուցողական անկառավարելիության վիճակը:

Կառավարության կայունության համար անխուսափելի է նրա խորհրդարանական գործունակությունը: Դա արտահայտվում է խորհրդարանի կողմից նրա քաղաքական մտադրություններին համաձայնություն տալով, ինչը որպես կանոն տեղի է ունենում կառավարության ներկայացրած օրինագծերի օգտին քվեարկելով: Վստահության հարցը դնելը կառավարության համար դասական խորհրդարանական գործունեության միջոց է: Այն ենթադրում է կառավարությանն աջակցող ոչ հաստատուն խորհրդարանական մեծամասնություն: Քաղաքական իմաստով նորմը նկատի ունի **քաղաքական ճգնաժամերը**: Եթե կառավարությունը չունի խորհրդարանական մեծամասնություն, ապա նա կարող է ցանկացած ժամանակ դնել իր վստահության հարցը: 157-րդ հոդվածն սկզբունքորեն պարունակում է նաև նոր խորհրդարանական ընտրությունների հասնելու հնարավորություն, երբ Ազգային ժողովը կառավարությանը վստահություն չի հայտնում և կառավարության հրաժարականից հետո չի կարողանում ընտրել նոր վարչապետ:

Անվստահության քվեն ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի իմաստով ստիպում է կառավարությանը հրաժարական տալ: Կառավարության հրաժարականը, որի հետևանքը նոր վարչապետի ընտրությունն է (ՀՀ Սահմ. 149-րդ հոդ. 2-րդ մաս), պարունակում է խորհրդարանի արձակման պոտենցիալ վտանգ: Եթե խորհրդարանը կառավարությանը վստահություն չի հայտնում, ապա դա խոսում է այն մասին, որ խորհրդարանում գոյություն չունի կառավարությանն աջակցող մեծամասնություն: Նման մեծամասնության բացակայությունն իր հերթին հավանական է դարձնում նոր վարչապետ ընտրելու խորհրդարանի անընդունակությունը, որի հետևանքն իրավունքի ուժով խորհրդարանի արձակումն է:

Խորհրդարանի հնարավոր արձակման հետ այս կապը հենց որոշում է կառավարության **վստահության հարցը դնելու գործառույթը** խորհրդարանական կառավարման համակարգում: Միայն առաջին հայացքից է ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածը ուժեղացնում վարչապետի դրությունը խորհրդարանի առջև: Խորհրդարանական ժողովրդավարության պայմաններում քաղաքական ճակատների գծերն անցնում են ոչ թե այս երկու սահմանադրական մարմինների՝ կառավարության ու խորհրդարանի միջով, այլ ըստ էության խորհրդարանի ներսում իշխող մեծամասնության ու ընդդիմության միջով: Դրան համապատասխան՝ ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածը ծառայում է գործունակ, կառավարությանն աջակցող մեծամասնության պահպան-

մանը կամ դրա վերականգնմանը: Կառավարությանն աջակցող մեծամասնության վերջնական ձախողման դեպքում է, որ խորհրդարանի արձակման միջոցով ի վերջո ընտրողներն են հնարավորություն ստանում ստեղծել նոր խորհրդարանական մեծամասնություն:

ա) Պոզիտիվ և նեգատիվ վստահության հարց

Վստահության հարցի միջոցով կառավարությունը դիմում է խորհրդարանին իրեն վստահություն հայտնելու դիմումով: ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի ձևակերպումը տպավորություն է ստեղծում, թե կառավարությունը, իր վստահության հարցը դնելով, պարտադիր պետք է նպատակ հետապնդի ստանալու խորհրդարանի վստահության քվեն (այսպես կոչված «**պոզիտիվ վստահության հարց**»): Մակայն վստահության հարցը կառավարության ձեռքին պաշտպանության գործիք չէր լինի, եթե այն չթույլատրվեր այն դեպքերում, երբ կառավարությունն ակնկալում է կամ ցանկանում է հասնել նրան, որ խորհրդարանում իրեն աջակցող մեծամասնության կորուստն արտահայտվի նաև ձևականորեն՝ խորհրդարանի կողմից իրեն վստահություն հայտնելու **մերժման** տեսքով, ինչը ճանապարհ է հարթում խորհրդարանի հնարավոր արձակման համար: Այսպիսի «**նեգատիվ**», ի սկզբանե **խորհրդարանի արձակմանն ուղղված վստահության հարցի** սահմանադրաիրավական թույլատրելիությունն անվիճելի է, քանի դեռ այն դրվում է փոքրամասնության կառավարության կողմից, այսինքն՝ երբ խորհրդարանի կողմից կառավարությանը վստահություն հայտնելը մերժելը համապատասխանում է Ազգային ժողովում մեծամասնական փաստացի հարաբերություններին:

Դրան հակառակ՝ խիստ վիճելի է այն հարցը, թե արդյոք, ու եթե այո, ապա ինչ սահմաններում է թույլատրելի կառավարության կողմից խորհրդարանի արձակման նպատակ հետապնդելը՝ վստահության հարց դնելու միջոցով, երբ նա խորհրդարանում **ունի** իրեն աջակցող մեծամասնություն: Քանի որ նման վստահության հարցի հաջողությունը կախված է նրանից, որ կառավարությանն աջակցող մեծամասնության պատգամավորները վստահության հարցի վերաբերյալ քվեարկության ժամանակ առնվազն պիտի ձեռնպահ մնան վստահություն հայտնելուց, քանի որ ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության համաձայն կառավարությանը վստահություն հայտնելու համար անհրաժեշտ է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, ուստի նման գործընթացն անվանում են «**ոչ իսկական**» **վստահության հարց**: Այն շատերի կողմից համարվում է **Սահմանադրության չարաշահում** և այդ հիմնավորմամբ մերժվում: Հակառակ կարծիքն անընդունելի է համարում վստահության հարցը դնելու և խորհրդարանում **քվեարկության շարժառիթների** հետազոտությունը և հիմք է ընդունում միայն օբյեկտիվ իրականությունը: Երրորդ կարծիքը գնում է միջին ճանապարհով և խորհրդարանի լուծարմանն ուղղված «**նեգատիվ**» վստահության հարցը թույլատրելի է համարում ոչ միայն փոքրամասնության կառավարության կողմից, այլ նաև ուրիշ միջոցներով անհաղթահարելի ճգնաժամային իրավիճակներում: Նման

իրավիճակի առկայության գնահատման հարցում կառավարությունն ունի **լայն ազատություն**, որը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է միայն սահմանափակ ստուգման, մասնավորապես հիմնականում կառավարության գնահատականի **համոզականության** տեսանկյունից:

Պետք է նաև անպայման նկատի ունենալ, որ խորհրդարանի արձակման նպատակով վստահության հարց դնելը և խորհրդարանի՝ դրան հաջորդող հնարավոր արձակումը կրճատում են ընթացիկ խորհրդարանի լիազորությունների ժամկետը (ՀՀ Սահմ. 90-րդ հոդ. 1-ին մաս) և դրանով միաժամանակ միջամտում է պատգամավորի՝ սահմանադրորեն երաշխավորված կարգավիճակին (ՀՀ Սահմ. 94-րդ հոդ) և կարող է ՀՀ Սահմ. 168-րդ հոդ. 4-րդ կետին համապատասխան վիճարկվել սահմանադրական դատարանում:

բ) ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի կիրառման ոլորտը

Ըստ ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի՝ խորհրդարանի արձակումը կախված է ըստ էության **երեք որոշումներից**՝

1. կառավարության կողմից իր վստահության հարցը դնելուց,
2. Ազգային ժողովի կողմից դրա մերժումից և
3. նոր վարչապետի ընտրության ձախողումից:

157-րդ հոդվածն իր բառացի տեքստով պահանջում է միայն նշված նախապայմանների **օբյեկտիվ առկայությունը**: Որոշակի շարժառիթներ չեն ենթադրվում: «Վստահություն» տերմինը նույնպես չի նեղացնում 157-րդ հոդվածի գործողության ոլորտը: Ազգային ժողովի կողմից կառավարությանը վստահություն չհայտնելը չի ենթադրում կառավարության հետ որոշակի ծրագրային տարաձայնություն, այլ միայն նշանակում է, որ խորհրդարանը հրաժարվում է կառավարությանն աջակցելու պատրաստակամությունից՝ անկախ դրա շարժառիթներից:

Դրանով վստահության հարցը և վստահության մերժումը կարող են չարաշահվել այն իմաստով, որ կարող են գործադրվել միայն **խորհրդարանի նոր ընտրությունների հասնելու նպատակով**: Այս դատողությունների հիման վրա արդարացի հարց է ծագում, թե արդյոք թույլատրելի է կառավարության կողմից իր վստահության հարցը դնելը՝ ի սկզբանե նոր խորհրդարանական ընտրությունների հասնելու նպատակով: Այս հարցի պատասխանը պետք է դիտարկել խորհրդարանի արձակման՝ սահմանադրորեն թույլատրելի հիմքերի լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է խորհրդարանի արձակման **2 հիմք**՝

1. երբ Ազգային ժողովն ի վիճակի չի լինում ընտրելու նոր վարչապետ ՀՀ Սահմ. 149-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան և,
2. երբ ԱԺ-ն հավանություն չի տալիս նոր ձևավորված կառավարության ծրագրին:

Նոր վարչապետ ընտրելու անընդունակության հիմքով արձակումը տեղի է ունենում, երբ վարչապետ ընտրելու անհրաժեշտություն է ծագում **վարչապետի հրաժարականի** կամ նրա պաշտոնն այլ կերպ թափուր մնալու կամ **կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից առաջին անգամ հավանություն չտալու** դեպքերում (151-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին նախ.):

Նոր ձևավորված կառավարության ծրագրին հավանություն չտալու հիմքով Ազգային ժողովի արձակումը տեղի է ունենում երկու դեպքում՝

ա/ երբ Ազգային ժողովը նախկին կառավարության ծրագրին հավանություն չտալուց հետո ընտրում է վարչապետ, սակայն հավանություն չի տալիս նոր ձևավորված կառավարության ծրագրին (ՀՀ Սահմ. 151-րդ հոդ. 3-րդ մասի 2-րդ նախ.) և

բ/ երբ Ազգային ժողովն անվստահություն է հայտնում վարչապետին **իր նախաձեռնությամբ՝** նոր վարչապետ ընտրելու միջոցով, բայց կրկին հավանություն չի տալիս նոր ձևավորված կառավարության ծրագրին (ՀՀ Սահմ. 151-րդ հոդ. 4-րդ մաս, 115-րդ հոդ.)

Այս կարգավորումներից (ՀՀ Սահմ. 115-րդ հոդ. 1-ին մաս, 149-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասեր և 151-րդ հոդ. 3-րդ և 4-րդ մասեր) ճանաչելի է դառնում սահմանադրի այն մտադրությունը, որ խորհրդարանի արձակումը թույլատրելի է շատ նեղ սահմաններում: Այն պետք է թույլատրելի լինի միայն այն դեպքում, երբ պարզ է դառնում, որ Ազգային ժողովում այլևս չկա գործող կառավարությանն աջակցող ու նոր կառավարություն ձևավորելու ունակ մեծամասնություն:

Խորհրդարանի արձակման սահմանադրական հիմքերի լույսի ներքո կառավարության կողմից իր վստահության հարցը դնելու ինստիտուտի կիրառումը պետք է սահմանափակված լինի **դրա նպատակով**: Ինչպես արդեն նշվեց, այս ինստիտուտի նպատակը **խորհրդարանական կառավարման համակարգի կայունության ապահովումն** է: Նշված նորմերը խորհրդարանի նոր ընտրությունները սահմանափակում են **այլ կերպ անլուծելի քաղաքական ճգնաժամի** դեպքով: Այդ իսկ պատճառով **«քաղաքական ճգնաժամը»** կամ **«անկայուն քաղաքական դրությունը»** ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի փաստակազմի չգրված հատկանիշ է: Հետևաբար, կառավարության կողմից իր վստահության հարցը դնելը և խորհրդարանի՝ դրան հաջորդող արձակումը սահմանադրորեն թույլատրելի են միայն այն դեպքում, երբ դրանք **գործադրվում են նման ճգնաժամային վիճակների հաղթահարման համար**:

Անկայունության վիճակը բնորոշվում է նրանով, որ խորհրդարանական աջակցության բացակայության կամ դրա վտանգված լինելու պատճառով կառավարության քաղաքական գործունակությունը հարցականի տակ է: ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածի փաստակազմի այս օբյեկտիվացումն ունի այն առավելությունը, որ այդ գործընթացի սահմանադրաիրավական թույլատրելիությունը չի չափվում իր վստահության հարցը դնող կառավարության և այդ վստահությունը մերժող պատգամավորների գործողությունների **շարժառիթներով**: Իր

վստահության հարցը դնելը կառավարության քաղաքական որոշումն է, որը ենթակա չէ անսահմանափակ դատական վերահսկողության: Ճգնաժամային իրավիճակների գնահատականներն ու կանխատեսումները գտնվում են կառավարության և վարչապետի ազատության ոլորտում, որն ավարտվում է այնտեղ, որտեղ խորհրդարանի արձակումը և նոր ընտրությունները ճգնաժամի հաղթահարման համար **ակնհայտորեն անհրաժեշտ չեն**: Այն մտավախությունները, թե ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածը նման ըմբռնման պարագայում կարող է չարաշահվել, կարելի է մեղմել նրանով, որ քաղաքական համակարգն ունի ինքնակարգավորման հատկություն: ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածով առաջնորդվող կառավարությունը չի կարող իմանալ, թե արդյոք ընտրողը հավանություն կտա նրա այդ քայլին:

Այսպիսով, ՀՀ Սահմ. 157-րդ հոդվածը կարող է կիրառվել ի սկզբանե խորհրդարանի արձակման նպատակով, որպեսզի տեղի ունենան նոր խորհրդարանական ընտրություններ, երբ կառավարությունը խորհրդարանում մեծամասնություն չունի կամ չի կարող վստահ լինել, որ խորհրդարանը միշտ կաջակցի իրեն, այսինքն՝ **երբ միայն նոր ընտրությունները կարող են խորհրդարանում ստեղծել կայուն մեծամասնական հարաբերություններ**: Այս ոչ իսկական վստահության հարցն արդարացված է, երբ խորհրդարանի աջակցության կարիքն ունեցող կառավարությունը կորցրել է իր գործունակությունը:

3. Վարչապետի հրաժարականը

ա) «Քաղաքական անկայունության վիճակը» իբրև վարչապետի «ոչ իսկական» հրաժարականի չգրված հատկանիշ

Համաձայն ՀՀ Սահմ. 158-րդ հոդ. 1-ին նախ. 4-րդ տարբերակի՝ կառավարությունը պետք է հրաժարական ներկայացնի նաև վարչապետի հրաժարականի դեպքում: Դրանից հետո Ազգային ժողովը պետք է վարչապետ ընտրի ՀՀ Սահմ. 149-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան: Սակայն Սահմանադրությունը չի կարգավորում վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու որևէ մանրամասն: Մասնավորապես, ոչինչ չի ասվում այն մասին, թե երբ, ինչ պայմաններում, ինչ հիմքով կամ ինչ նպատակով կարող է վարչապետը հրաժարական ներկայացնել: Հարցը կարևոր է հատկապես այն տեսանկյունից, թե արդյոք վարչապետն իրավունք ունի հրաժարական ներկայացնելու ոչ թե, որովհետև այլևս չի ցանկանում զբաղեցնել վարչապետի պաշտոնը, այլ, հակառակը, ցանկանում է, բայց հրաժարական ներկայացնելով՝ **ի սկզբանե նպատակ է հետապնդում հասնելու խորհրդարանի արձակմանը**, որպեսզի նոր խորհրդարանական ընտրություններից հետո իր լիազորություններն իրականացնի խորհրդարանական այլ մեծամասնության պայմաններում: Քանի որ, ինչպես արդեն ասացի, ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածն այդ մասին ոչինչ չի ասում, ուստի պետք է մեկնաբանել այդ նորմը:

Քերականական մեկնաբանություն: ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածի **բառացի տեքստը** նախ խոսում է վարչապետի հրաժարականի գուտ ֆորմալացված կիրառման օգտին: Նորմում ոչ մի պահանջ կամ նախապայման սահմանված չէ: Թեև կարելի է մտածել այն մասին, որ «հրաժարական» հասկացությունն ինքը պարունակում է որոշակի նյութական պահանջներ այն իմաստով, որ վարչապետն այլևս չի ցանկանում զբաղեցնել այդ պաշտոնը և հրաժարվում է այսուհետ կատարել վարչապետի պարտականությունները, սակայն կառավարության հրաժարականի մյուս դեպքերի համատեքստում վարչապետի հրաժարականը նշանակում է միայն վարչապետի **ձևականորեն արտահայտված կամքը՝ վայր դնելու վարչապետի լիազորությունները:** Հետևաբար, նորմի բառացի տեքստը խոսում է հօգուտ այն մոտեցման, որ վարչապետի կողմից իր լիազորությունները վայր դնելու մասին հայտարարությունից գատ ոչ մի այլ լրացուցիչ պահանջ չի ներկայացվում նրա հրաժարականին:

Համակարգային մեկնաբանություն: Սակայն ՀՀ 158-րդ հոդվածի նման մեկնաբանությունը փաստացի կնշանակի **խորհրդարանի արձակման անսահմանափակ հնարավորություն**, ինչը հակասում է Սահմանադրության ողջ տրամաբանությանն ու համակարգային կառուցվածքին: ՀՀ Սահմ. 149-րդ և 151-րդ հոդվածներում ներառված համակարգային իրավակարգավորումները շատ բարձր շեմ են սահմանում խորհրդարանի արձակման համար և դրանով իսկ մեզ հասկացնում, որ խորհրդարանի արձակումը պետք է հնարավոր լինի միայն **խիստ բացառիկ դեպքերում**, և դրա նպատակը պետք է լինի բացառապես **քաղաքական ճգնաժամերի հաղթահարումը**, ինչպես որ դա կառավարության կողմից իր վստահության հարցը դնելու դեպքում է պահանջվում: Ուստի այս տրամաբանությամբ՝ վարչապետի հրաժարականը՝ խորհրդարանի արձակման նախասկզբնական մտադրությամբ, նույնպես պետք է կիրառվի իբրև քաղաքական ճգնաժամի հաղթահարման գործիք, այլ ոչ թե ցանկացած ժամանակ: Խորհրդարանի արձակումը գործող Սահմանադրության ընդհանուր տրամաբանության լույսի ներքո ամենևին էլ ինքնին հասկանալի բան չէ: Բացի այդ, Սահմանադրության կարգավորումների ամբողջ համակարգը նպատակ ունի ապահովելու խորհրդարանում կառավարությանն աջակցելու ունակ մեծամասնություն: Օրինակ՝ թեև ՀՀ Սահմ. 115-րդ հոդ. 1-ին մասը նախատեսում է վարչապետին պաշտոնանկ անելու հնարավորություն, սակայն խորհրդարանի ժամկետից շուտ արձակում հենց հնարավոր չէ: ՀՀ Սահմ. 149-րդ և 151-րդ հոդվածները նույնպես նպատակ են հետապնդում երաշխավորելու քաղաքական կայունությունը: ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածի գուտ ձևական կիրառումն ըստ էության կհանգեցնի **խորհրդարանի ձևափոխված ինքնալուծարման իրավունքի**, ինչը կհակասի Սահմանադրության իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությանը: Հետևաբար, համակարգային տեսանկյունից ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածի դրույթը պետք է ողջամտորեն մեկնաբանել ու կիրառել իբրև նեղ սահմանափակված բացառիկ դրույթ և ի սկզբանե խորհրդարա-

նի արձակման նպատակով վարչապետի հրաժարականին պետք է այնուամենայնիվ ներկայացնել որոշակի նյութական սահմանափակումներ:

Նպատակային մեկնաբանություն: ՀՀ Սահմ. 158-րդ հոդվածի 1-ին նախադասության նպատակը նույնպես խոսում է վարչապետի հրաժարականի գուտ ձևական կիրառման **դեմ**: Այդ նորմի իմաստն ու նպատակը քաղաքական ճգնաժամերի հաղթահարումն է: Հնարավոր արձակման ճնշման տակ խորհրդարանն ստիպված է ձևավորել կառավարությանն աջակցող մեծամասնություն, իսկ ձախողման դեպքում խորհրդարանական նոր ընտրությունների միջոցով ձևավորել կայուն մեծամասնություն: Հետևաբար, 158-րդ հոդ. 1-ին նախադասության նորմը պետք է կայունացնող ազդեցություն ունենա, ինչը ձեռք չի բերվի, եթե խորհրդարանը կարողանա ցանկացած ժամանակ փաստացի ինքնալուծարվել:

Պատմական մեկնաբանություն: 2005 թվականի Սահմ. 55-րդ հոդ. 4-րդ կետի 3-րդ պարբերության դրույթը, որը գրեթե բառացիորեն կրկնվում է գործող Սահմ. 158-րդ հոդ. 1-ին նախադասությունում, նույնպես ուներ կայունացնող ու հնարավոր քաղաքական ճգնաժամերը հաղթահարելու նպատակ: Պատմական տեսանկյունից ևս կառավարության հրաժարականին տանող առանձին փաստակազմերը պետք է կիրառվեն հենց այդ նպատակով:

Ներկայացված դատողությունների լույսի ներքո ՀՀ Սահմ. 158-րդ հոդ. 1-ին նախադասության դրույթի փաստակազմը պետք է լրացնել մի **չգրված հատկանիշով**: Սահմանադրության կարգավորումների ընդհանուր տրամաբանությունը չաղավաղելու համար 158-րդ հոդ. 1-ին նախ. 4-րդ տարբերակը կիրառելու համար պետք է առնվազը առկա լինի **քաղաքական անկայունության վիճակ**: Դա իհարկե չի նշանակում, թե վարչապետի հրաժարականը ի սկզբանե խորհրդարանի արձակման նպատակով (այսպես կոչված «**ոչ իսկական**» **հրաժարական**) բոլոր դեպքերում հակասահմանադրական է: Ավելի շուտ պետք միայն խուսափել, որ կամայականորեն նշանակվեն նոր խորհրդարանական ընտրություններ, թեև խորհրդարանում առկա է կառավարությանն աջակցող մեծամասնություն: Վարչապետի հրաժարականի նման չարաշահում հնարավոր է, օրինակ, այն դեպքում, երբ կոալիցիոն կառավարությունը թեև խորհրդարանում ունի մեծամասնություն, սակայն կոնկրետ պահին հասարակական տրամադրությունների հիման վրա կոալիցիոն կուսակցություններից մեկը ողջամտորեն կարող է հույս ունենալ, որ այդ պահին նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնելու դեպքում ինքը խորհրդարանում կունենա այնքան մեծամասնություն, որ կկարողանա միայնակ կազմել կառավարություն: Վարչապետի՝ ի սկզբանե խորհրդարանի արձակման նպատակ հետապնդող հրաժարականի չգրված նախապայման համարվող «քաղաքական անկայունության վիճակը», այսպիսով, պահանջում է գոնե, որ վարչապետը վստահ չլինի այն հարցում, որ կառավարությունը խորհրդարանի կողմից մշտապես աջակցություն կստանա:

բ) Քաղաքական անկայունության վիճակը

Մնում է պարզել, թե արդյոք վարչապետի հրաժարականի ժամանակ երկրում առկա էր քաղաքական անկայունության վիճակ: Ազգային ժողովում շարունակում էր մեծամասնությունը կազմել Հանրապետական կուսակցությունը: Թեև հանրապետական խմբակցությունն անցած ամիսների ընթացքում հավանություն էր տվել կառավարության ծրագրին և նրա ներկայացրած օրինագծերին, սակայն վերջին շրջանում այդ խմբակցության առանձին գործողություններ լրջորեն կասկածի տակ դրեցին կառավարությանն աջակցելու նրա պատրաստակամությունը: Ազգային ժողովի կանոնակարգում հայտնի խնդրահարույց փոփոխությունները կառավարության կամքին հակառակ, ինչպես նաև հանրապետական խմբակցության կողմից Ընտրվող կառավարության կողմից առաջարկվող փոփոխությունների ընդունումը ձախողելը այլևս որևէ կասկած չէին թողնում այն հարցում, որ կառավարությունը չի կարող վստահ լինել, որ մշտապես աջակցություն կստանա խորհրդարանի կողմից: Քաղաքական անկայունության այդ վիճակի լուծման միակ տարբերակը նոր խորհրդարանական ընտրությունների միջոցով նոր կայուն մեծամասնության ձևավորումն է Ազգային ժողովում: Հետևաբար, վարչապետի հրաժարականը ներկայացվել է քաղաքական անկայունության վիճակում, և այդպիսով ձևական նախապայմաններից բացի այն բավարարում է նաև 158-րդ հոդ. 1-ին նախադասության փաստակազմի չգրված նյութական նախապայմանը, այն է՝ քաղաքական անկայունության վիճակի առկայությունը: Այսպիսով, վարչապետի հրաժարականը ի սկզբանե խորհրդարանի արձակման նպատակով ձևական և նյութական առումով համապատասխանում է Սահմանադրությանը:

IV. Խորհրդարանի ինքնալուծարման իրավունքը՝ իբրև ճգնաժամի լուծման գործիք

Հայաստանում ստեղծված քաղաքական ճգնաժամի լուծման հնարավոր տարբերակների քննարկումների ժամանակ առաջարկվում էր նաև Սահմանադրության մեջ նախատեսել խորհրդարանի ինքնալուծարման իրավունք, այսինքն՝ խորհրդարանը կարողանա Սահմանադրությամբ նախատեսված ձայների մեծամասնությամբ որոշում ընդունել իր արձակման մասին:

Խորհրդարանի արձակման առնչությամբ ընդհանուր առմամբ կարելի է տարբերել հինգ համակարգեր.

1. խորհրդարանի՝ ինքն իրեն լուծարելու իրավունքը (ինքնալուծարման լիազորություն),
2. սուվերենի (ժողովրդի) իրավունքը՝ հետ կանչելու խորհրդարանը (խորհրդարանի պլեբիսցիտար լուծարում),

3. խորհրդարանի արձակույդը նոր կառավարություն ձևավորելու կամ նոր վարչապետ ընտրելու անընդունակության դեպքում (այս տարբերակն է ընտրել ՀՀ Սահմանադրությունը),
4. խորհրդարանի արձակույդը կառավարության վստահության հարցին բացասաբար պատասխանելու դեպքում, այսինքն՝ երբ կառավարությունը կորցնում է խորհրդարանում իրեն աջակցող մեծամասնությունը,
5. կառավարության իրավունքը՝ արձակելու խորհրդարանը:

Եվրոպական երկրներում խորհրդարանի ինքնալուծարման իրավունքը խորհրդարանի ստանդարտ լիազորությունների թվին չի պատկանում: Նման իրավունք նախատեսված է միայն Լիտվայի (58-րդ հոդ.), Ավստրիայի (29-րդ հոդ. 2-րդ մաս), Լեհաստանի (98-րդ հոդ. 3-րդ մաս), Հունգարիայի (28-րդ հոդ. 2-րդ մաս) և Կիպրոսի (67-րդ հոդ. 1-ին կետ) սահմանադրություններում:

Որ ՀՀ Սահմ.-ը խորհրդարանի ինքնալուծարման իրավունք չի նախատեսում, բխում է Ազգային ժողովին հնարավորինս մեծ կայունություն տալու սահմանադրական նպատակից: Որովհետև խորհրդարանը պետք է ինտենսիվորեն ջանքեր թափի ձևավորելու կայուն խորհրդարանական մեծամասնություն և ոչ թե ժամկետից շուտ ինքնալուծարման միջոցով խուսափի պատասխանատվությունից:

Խորհրդարանի ինքնալուծարման իրավունքի անհրաժեշտությունը հիմնավորվում է տարբեր կերպ: Դրա օգտին ներկայացվում է այն փաստարկը, որ խորհրդարանի նման իրավունքն ամբողջովին համապատասխանում է ժողովրդավարության սկզբունքին և պատգամավորների ազատությանը, և որ դա փորձված միջոց է և ուժեղացնում է խորհրդարանը: Բացի այդ, խորհրդարանի ինքնալուծարման իրավունքի թույլատրելիությունը հիմնավորելու համար վկայակոչվում են այլ պետությունների սահմանադրությունները, որոնցում ամրագրված է խորհրդարանի ինքնալուծարման իրավունքը: Օրինակ՝ նման իրավունք նախատեսված է Գերմանիայի դաշնային երկրամասերի սահմանադրություններում: Ինքնալուծարման իրավունքի միջոցով կարող է հաղթահարվել խորհրդարանում առաջացած ճգնաժամը, և վերականգնվել խորհրդարանական կառավարման համակարգի գործունակությունը: Խորհրդարանի ինքնալուծարման իրավունքի կիրառման տիպիկ իրավիճակներից են, օրինակ, երբ խորհրդարանն ի վիճակի չէ ձևավորելու աշխատունակ կառավարություն, կամ խորհրդարանում չկա աշխատունակ մեծամասնություն: Կարող է նաև առկա լինել խորհրդարանի և կառավարության աշխատանքի հանդեպ վստահության ընդհանուր կորուստ, որի հիման վրա պատգամավորները գալիս են այն համոզման, որ իրենք այլևս չեն կարող լուծել առաջացած պրոբլեմները: Խորհրդարանի ինքնալուծարման իրավունքը նման դեպքերում չի նշանակում անվստահություն կառավարության հանդեպ, ինչպես որ լինում է կառավարությանն անվստահություն հայտնելուց հետո խորհրդարանի արձակման դեպքում: Գործառնական

առումով խորհրդարանի ինքնալուծարման իրավունքն ամենից առաջ պահեստային գործիք է քաղաքական մեծամասնության բացակայության դեպքերի համար:

Մյուս կողմից՝ պիտի որ անթույլատրելի լինի առանց նախապայմանների, միայն խորհրդարանի քաղաքական հայեցողությունից կախված ինքնալուծարման իրավունքը: Նման իրավունքի դեմ խոսում է ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչական մարմնի կայունության նկատմամբ հասարակական շահը, անգամ եթե միաժամանակ պետք է խոստովանել, որ խորհրդարանի ինքնալուծարման իրավունքն այնտեղ, որտեղ թույլատրված է, չի հանգեցրել անկայուն քաղաքական իրադրության:

Խորհրդարանի ինքնալուծարման իրավունքը կրճատում է քաղաքացու ընտրական իրավունքը, որն անմիջական կապի մեջ է պատգամավորի ազատ մանդատի հետ: Ինքնալուծարման իրավունքը կփոխի ոչ միայն օրենսդրի ու գործադիրի միջև հավասարակշռությունը, այլ նաև խորհրդարանում կուսակցությունների հարաբերությունը: Ազգային ժողովի ինքնալուծարմամբ ավարտվում է նաև Ազգային ժողովի կողմից ընտրված վարչապետի և նրա կառավարությանը պատկանող նախարարների մանդատը: ՀՀ Սահմանադրության ներկա կարգավորումների համեմատությամբ խորհրդարանի ինքնալուծարման իրավունք նախատեսելը կթուլացնի գործադիր իշխանությունը և նրան կդարձնի ավելի կախյալ: Մյուս կողմից՝ կվնասվի խորհրդարանի ներդաշնակությունը, որովհետև կա վտանգ, որ փոքր կուսակցությունները միշտ կգտնվեն մեծ կուսակցությունների կողմից խորհրդարանն արձակելու սպառնալիքի տակ:

V. Հեռանկարներ

Ինչքան էլ որ հայ սահմանադիրը խորհրդարանին է վերապահել կառավարություն կազմելու լիազորությունը և հոգ է տանում կայուն մեծամասնական հարաբերությունների հաստատման համար (89-րդ հոդ. 3-րդ մասի 2-րդ նախ.), այնուամենայնիվ փորձը ցույց տվեց, որ հնարավոր է նաև փոքրամասնության կառավարության ձևավորումը Հայաստանում: Փոքրամասնության կառավարության՝ երկարաժամկետ հաջողության շանսերը չնչին են: Առանց խորհրդարանական մեծամասնության կառավարությունները քաղաքական հաջողության հասնելու հարցում մեծ մասմար կախված են խորհրդարանական ընդդիմության համագործակցության պատրաստակամությունից: Թեև կարելի է մտածել, որ փոքրամասնության կառավարություններն իրենց լիազորությունները կարող են իրականացնել հնարամտորեն և փորձել հնարավորինս փոքրացնել քաղաքական առումով անհրաժեշտ ձևական օրենքների թիվը և կառավարության քաղաքականությունն իրականացնել կառավարության որոշումներ ընդունելու իրավունքի հիման վրա (ՀՀ Սահմ. 152-րդ հոդ. 4-րդ մաս և 153-րդ հոդ. 3-րդ մաս): Այն, որ ընդդիմությունը նույնպես կարող է իր նախաձեռնած օրինագծերի միջոցով մասնակցել քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, թեև կարող է ուժեղացնել

պառլամենտարիզմի գաղափարը, սակայն միաժամանակ թուլացնում է կառավարությունը, որն այդ դեպքում պարտավոր է կյանքի կոչել իր կամքին հակառակ ընդունված օրենքները:

Հայաստանի պարագայում մնում է հույս հայտնել, որ դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում խորհրդարանում կձևավորվեն կայուն մեծամասնական հարաբերություններ, և նոր ստեղծված կառավարությունը կունենա խորհրդարանի մեծամասնության աջակցությունը: Դա հնարավորություն կտա կառավարությանը լրիվ ծավալով և անխոչընդոտ իրականացնելու Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները՝ իր քաղաքական ծրագրերը կյանքի կոչելու նպատակով: